ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԲՏԱՆ-ԴՄ-2024/01-10
ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ք. Երևան 15 հուլիսի, 2024թ.

Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունը, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղար Դավիթ Գասպարյանի (այսուհետ՝ նախարարություն), որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Ֆյուզ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ կազմակերպություն), ի դեմս տնօրեն Սարեն Աբգարյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի N 1937-Ն որոշումը, Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարի 01.03.2024թ. ««11009 Ձեռներեցության տեխնոլոգիական էկոհամակարգ» միջոցառման ծրագիրը հաստատելու մասին» թիվ 366-Ա և 11.06.2024թ. «Մրցութային հանձնաժողովի որոշումը հաստատելու և դրամաշնորհի պայմանագրի նախագիծ ներկայացնելու մասին» թիվ 1106-Ա հրամանը, «No-code հարթակ» ծրագրի (այսուհետ՝ ծրագիր) իրականացումն ապահովելու նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան և գինը

1.1. Սույն պայմանագրով նախարարությունը պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով պայմանագրի 5-րդ կետով սահմանված կարգով կազմակերպությանը հատկացնել գումարից 5,000,000 (հինգ միլիոն) ՀՀ դրամ (ներառյալ՝ հարկերը):

1.2. Ծրագրով նախատեսված՝ կազմակերպության կողմից իրականացվելիք միջոցառումները (այսուհետ միջոցառումներ) ներկայացված են սույն պայմանագրի հավելված 1-ում:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1. Նախարարությունն իրավունք ունի՝

2.1.1. ցանկացած ժամանակ ստուգելու կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

2.1.2. ծրագրով և սույն պայմանագրով սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և կազմակերպությունից պահանջելու վճարել սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3. առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. կազմակերպությունը ժամանակին չի սկսում ծրագրի իրականացումը, կամ ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ՝ պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում չի իրականացվելու,

բ. կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է ծրագրով նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները (միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),

գ. իրականացված միջոցառումները չեն համապատասխանում ծրագրով և սույն պայմանագրով սահմանված պահանջներին.

2.1.4. սույն պայմանագիրը ՀՀ օրենսդրությամբ կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ միջոցառումների արդյունքները:

2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1. իրականացված միջոցառման արդյունքը նախարարության կողմից ընդունվելու դեպքում պահանջելու վճարել իրեն հասանելիք գումարը պայմանագրի 5-րդ կետում սահմանված կարգով և ժամկետներում.

2.2.2. նախարարության կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները:

2.3. Նախարարությունը պարտավոր է՝

2.3.1. ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել կազմակերպությանը.

2.3.2. կատարել ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ.

2.3.3. իրականացնել ծրագրով նախատեսված այլ աշխատանքներ.

2.3.4. իրականացված միջոցառման մասին ներկայացված կատարողական հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում:

Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված միջոցառումը համապատասխանում է ծրագրի և սույն պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են:

2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1. իրականացնել ծրագրի շրջանակներում նախարարության կողմից տրամադրված գումարներն՝ Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման N 20 ստանդարտի դրույթներին համապատասխան և առանձնացված հաշվառում:

2.4.2. պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով և (կամ) սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով.

2.4.3. կատարել նախարարության կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները.

2.4.4. սույն պայմանագրով սահմանված կարգով նախարարություն ներկայացնել միջոցառումների իրականացման մասին հաշվետվություններ, իսկ ծրագրի ավարտից հետո՝ ամփոփ հաշվետվություն.

2.4.5. սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու նախարարության հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում.

2.4.6. նախարարության կողմից առանձին միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում կազմակերպությունը պարտավորվում է անվճար՝ նախարարության կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները.

2.4.7. ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան:

2.4.8. Պայմանագրով սահմանված միջոցառումների տարեկան արդյունքները թերակատարելու դեպքում, դրա արդյունքում առաջացած գումարները վերադարձնել ՀՀ պետական բյուջե և հատուցել կողմի պատճառած վնասները՝ մինչև տվյալ բյուջետային տարվա նախավերջին աշխատանքային օրը:

2.4.9 Դրամաշնորհի շրջանակներում ստացված դրամական միջոցները բաշխել առանձնացված բանկային հաշվի (հաշվեհամարի) միջոցով:

2.4.10 **Ապահովել ակտիվ մասնակցություն ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության կողմից «Գաղափարի փուլ» դրամաշնորհային մրցույթի հաղթող ընկերությունների համար նախաձեռնված և իրականացվող ինկուբացիոն բնույթի կրթական դասընթացներին:**

2.4.11 Պայմանագրի կամ փուլի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել Կազմակերպության գրավոր առաջարկի առկայության դեպքում: Ընդ որում առաջարկը պիտի ներկայացվի պայմանագրի կամ տվյալ փուլի ժամկետը լրանալուց առնվազն 10 օրացուցային օր առաջ:

3. Մոնիթորինգը

3.1. Նախարարությունը ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

3.2. Մոնիթորինգն իրականացվում է նախարարության և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:

3.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով կազմակերպությանը տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:

3.4. Նախարարությունը ցանկացած ժամանակ կարող է ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

3.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

4. Պայմանագրի արդյունքի հանձնման և ընդունման կարգը

4.1 Պայմանագրի արդյունքն ընդունվում է նախարարության և կազմակերպության միջև հանձնման-ընդունման ակտի ստորագրմամբ:

Մինչև պայմանագրով ստանձնված պարտավորությունների կատարման համար նախատեսված օրը ներառյալ կազմակերպությունը armeps էլեկտրոնային համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.minfin.am հասցեով գործող կայքի «Դրամաշնորհներ» բաժնի «Ուղեցույցներ, ձեռնարկներ» ենթաբաժնում) նախարարությանն է տրամադրում իր կողմից ստորագրված՝ հանձնման-ընդունման ակտը

(հավելված N 4) և հաշվետվությունը: Ընդ որում կազմակերպությունը հանձնման-ընդունման ակտը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին:

4.2 Եթե իրականացված միջոցառումը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, նախարարությունը պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 20 (քսան) աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և armeps էլեկտրոնային համակարգի միջոցով կազմակերպությանն է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման ակտը:

4.3 Եթե իրականացված միջոցառումը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա նախարարությունը չի ստորագրում հանձնման-ընդունման ակտը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում armeps էլեկտրոնային համակարգի միջոցով կազմակերպությանը հետ է վերադարձնում հանձնման-ընդունման ակտը՝ նշելով դրա չստորագրման համար հիմք հանդիսացած անհամապատասխանությունը: Սույն կետի կիրառման դեպքում նախարարությունը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և կազմակերպության նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում նախարարությունը չի ընդունում պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա իրականացված միջոցառումը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը նախարարությունը armeps էլեկտրոնային համակարգի միջոցով կազմակերպությանն է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման ակտը:

5. Վճարման կարգը և ժամկետները

5.1 Նախարարությունը սույն պայմանագրի 1.1 կետում նշված գումարի 75 տոկոսը՝ 3,750,000 (երեք միլիոն յոթ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամը, պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում, փոխանցում է կազմակերպության բանկային հաշվին:

5.2 Մնացած գումարը՝ պայմանագրի 1.1 կետում նշված գումարի 25 տոկոսը, 1,250,000 (մեկ միլիոն երկու հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամը, փոխանցվում է կազմակերպության հաշվին՝ սույն պայմանագրով սահմանված ամփոփիչ հաշվետվություններն ընդունելուց, նախարարության և կազմակերպության միջև պայմանագրի արդյունքն ընդունելու վերաբերյալ հանձնման-ընդունման ակտը ստորագրելուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում: Ծրագրի շրջանակում հաղթող ճանաչված կազմակերպությունը պարտավորվում է ծրագիրն ավարտել մինչև ոչ ուշ, քան 2025 թվականի դեկտեմբերի 25-ը:

6. Կողմերի պատասխանատվությունը

6.1 Կազմակերպությունը պատասխանատվություն է կրում սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

6.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված ծրագրին չհամապատասխանող պարտավորություն իրականացնելու յուրաքանչյուր դեպքում կազմակերպությունից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 1.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում՝ տուգանքը հաշվարկվում է նաև պայմանագիրը սահմանված ժամկետներում կատարելու, սակայն նախարարության կողմից չընդունվելու, ինչպես նաև հաշվետվությունները պայմանագրով սահմանված ժամկետներում չներկայացնելու դեպքերում:

6.3 Պայմանագրով նախատեսված ծրագրի կատարման ժամկետը խախտելու դեպքում կազմակերպությունից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ պայմանագրի 1.1 կետում նախատեսված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են միջոցառման իրականացման արդյունքում կազմակերպությանը վճարման ենթակա գումարների հետ: Տույժը հաշվարկվում է աշխատանքային օրերով:

6.5 Նախարարության կողմից պայմանագրի 4.1 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Կազմակերպության նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. Պայմանագրի գործողության ժամկետը

7.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառվելու պահից և գործում է մինչև կողմերի ստանձնած պարտավորությունների՝ ամբողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

8.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, Նախարարությունների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. Եզրափակիչ դրույթներ

9.1. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված դրամաշնորհային ծրագիրը հանդիսանում է սույն պայմանագրի անբաժանելի մասը (հավելված 5):

9.2 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ ուրցույթի գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, պայմանագրի կողմը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս հաղթող կազմակերպություն ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում սույն կարգի պահանջներին, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո նախարարությունը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում, Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն, հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում՝ նախարարությունը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով պայմանագրի կողմի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով նախարարության կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

9.3 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

9.4 Կազմակերպության կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը նախարարությունը հրապարակում է իր պաշտոնական՝ www.hti.am կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը:

Կազմակերպությունը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը սույն կետում նշված կայքում հրապարակվելու օրը նախարարությունը այն ուղարկվում է նաև կազմակերպության էլեկտրոնային փոստին:

9.5. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:

9.6. Պայմանագիրը կնքվում է պայմանագրի կողմերի թվին համապատասխան թվով օրինակով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

9.7. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույ՝ պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետությա՝ օրենսդրությամբ:

1. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Նախարարություն	Կազմակերպություն
ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3/3, ՖՆ գործառնական վարչություն Հ/Հ 900011039444 ՀՎՀՀ 02565518 Գլխավոր քարտուղար՝ Դավիթ Պողոսյան (ստորագրություն)	«Ֆյուզ» ՍՊԸ ք. Երևան Հակոբ Հակոբյան 3/2 փ, 0033 «Կոնվերս բանկ» ՓԲԸ Հ/Հ 19300810038300 ՀՎՀՀ 06973725 Տնօրեն՝ Սարեն Աբգարյան A. Saren (ստորագրություն)

Հավելված 1
2024թ. հուլիսի 15-ին
կնքված N ԲՏԱՆ-ԴՄ-2024/01-10 պայմանագրի

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

NN ը/կ	Դրամաշնորհի միջոցների հաշվին իրականացվող միջոցառման						
	անվանումը	նկարագիրը	կազմակերպության կողմից կատարման ենթակա գործողությունները	ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները	միջոցառման իրականացման վերջնաժամկետը	հաշվետվության ներկայացման կարգն ու ժամկետը	պահանջվող գումարը (<< դրամ)
1.	Հարթակի ֆրոնտենդ հատվածի ծրագրավորում	Ստեղծել ընկերության և հավելվածի կայքերի ֆրոնդենդ հատվածը	Ստեղծել ընկերության կայքը, որը ներկայացնում է պրոդուկտի ֆունկցիոնալությունը մանրամասն: Կայքը կազված կլինի հիմնականում մեկ էջից որը կունենա մի շարք բաժիններից: Այն կհանդիսանա օգտատերերի համար որպես նախնական ներկայացում: Ստեղծել պրոդուկտի բուն կայքի ֆրոնտենդ հատվածը: Այսպիսով օգտատերը կարող է ընկերության հիմնական կայքից մուտք գործել բուն պրոդուկտի կայք: Պրոդուկտի կայքում օգտատերը կկարողանա օգտագործել խրագրի MVP տարբերակը: Այս տարբերակը հնարավորություն է գալիս օգտագործել ընկերության պրոդուկտի ֆունկցիոնալության մի մասը՝ ինչպիսիք են ստեղծել տեքստային և նկարային կոմպոնենտներ: Ինչպես նաև օգտատերերը կկարողանան ավելացնել կոմպոնենտներ որոնք ուղղակիորեն	Ակնկալվող արդյունքներ՝ 1. Ընկերության հիմնական կայք 2. Պրոդուկտի օգտագործման կայք 3. Drag-and-drop ֆունկցիոնալության նախնական վիճակ 4. Տեքստային կոմպոնենտների ավելացում ինտերֆեյսին 5. Նկարային կոմպոնենտների ավելաում ինտերֆեյսին 6. smart contract-ներ view ֆունկցիաների հետ ինտերակցիա և ինտերֆեյսին ավելացում 7. smart contract-ներ write ֆունկցիաների հետ ինտերակցիա և ինտերֆեյսին ավելացում Screen recording որը ներկայացնում է նշված ֆունկցիոնալությունը	31.10.2024	14.11.2024	4,000,000

			կարդում են smart contract-ներ view ֆունկցիաներով տրվող ինֆորմացիան և ցուցադրել այն: Պրոդուկտը նաև հնարավորություն է տալի օգտատիրոջը կցել իր դրամապանակը և էջին ավելացնել ֆունկցիաներ որոնցով կարող է ավելացնել ինտերֆեյսին smart contract-ների write ֆունկցիաներ: Վերոնշյալ ֆունկցիոնալությունը կծառայի որպես պրոդուկտի նախատիպ:				
2.	Հարթակի բեքենդ հատվածի ծրագրավորում և բեքենդ հատվածի բարելավվում	Ստեղծել հավելվածի բեքենդ հատվածը և ընդլայնել հատվածների ֆունկցիոնալությունը	Հնարավորություն տալ օգտատերերին պահպանել ստեղծած պարզ ֆունկցիոնալությամբ հավելվածի ինֆորմացիան: Այսպիսով օգտատերը պահպանելուց հետո կարող է հետ վերադառնալ, փոփոխություններ մտցնել հավելվածի մեջ և նորից պահպանել այն: Այլ օգտատերերը կարող են օգտագործել հավելվածի լինքը, որպեսզի կարողանան այն տեսնել և օգտագործել այն: Հավելվածի ստեղծողը նաև կարող է օտտագործել մի շարք API-ներ (օրինակ գնի համար) և օգտագործել այն հավելվածի մեջ:	1.Հնարավորություն տալ օգտատերերին պահպանել ստեղծած պարզ ֆունկցիոնալությամբ հավելվածի ինֆորմացիան: 2.Հնարավորություն տալ օգտատերերին պահպանելուց հետո հետ վերադառնալ, փոփոխություններ մտցնել հավելվածի մեջ և նորից պահպանել այն: 3. Ընդլայնել ֆրոնտենդ հատվածում նշված ֆունկցիոնալությունը: 4. API-ների ինտեգրացիայի հնարաորություն տալ: 5. Հնարավորություն տալ հավելվածի ստեղծողներին ունենալ առանձին հղում իրենց հավելված մուտք գործելու: 6. Հավելվածի հղումը նաև հնարավորություն կտա այլ օգտատերերին մուտք գործել և օգտագործել հավելվածը:	20.02.2025	06.03.2025	1,000,000

				Screen recording որը ներկայացնում է նշված ֆունկցիոնալությունը			
	Ընդամենը՝ 5,000,000 ՀՀ դրամ						

Նախարարություն

ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն
ք. Երևան, Կազգեն Սարգսյան 3/3,
ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011039444
ՀՎՀՀ 02565518
Գլխավոր քարտուղար՝ Դավիթ Գասպարյան

(ստորագրություն)

Կազմակերպություն

«Ֆյուզ» ՍՊԸ
ք. Երևան Հակոբ Հակոբյան 3/2 փ, 0033
«Կոնվերս բանկ» ՓԲԸ

Հ/Հ 19300810038300
ՀՎՀՀ 06973725
Տնօրեն՝ Սարեն Աբգարյան

(ստորագրություն)

Հավելված 2
2024թ. հուլիսի 15-ին
կնքված N ԲՏԱՆ-ԴՄ-2024/01-10 պայմանագրի

Դրամաշնորհային հաշվետվություն N_____

1. Ընդհանուր տեղեկատվություն

Ծրագրի անվանում	
Դրամաշնորհի N	
Դրամաշնորհատու կազմակերպություն	
Դրամաշնորհառու կազմակերպություն	
Ծրագրի իրականացման ժամանակահատված	
Հաշվետու ժամանակահատված	
Ներկայացման օր	
Հաշվետվության պատասխանատու (անուն, ազգանուն, պաշտոն)	

2. Բովանդակային հաշվետվություն

2.1 Թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:

2.2 Նկարագրել ծրագրի առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների , նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ ծրագրի խնդիրների/նպատակի իրականացմանը:

Նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)

2.3 Ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են ծրագրի գործողությունների իրականացմանը:

2.4 Թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները:

2.5 Նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել ծրագրի աշխատանքային պլանով, բայց իրականացվել են ծրագրի նպատակին հասնելու համար:

Նախարարություն	**Կազմակերպություն**
ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3/3, ՖՆ գործառնական վարչություն Հ/Հ 900011039444 ՀՎՀՀ 02565518 Գլխավոր քարտուղար՝ Դավիթ Գասպարյան	«Ֆյուզ» ՍՊԸ ք. Երևան Հակոբ Հակոբյան 3/2 փ, 0033 «Կոնվերս բանկ» ՓԲԸ Հ/Հ 19300810038300 ՀՎՀՀ 06973725 Տնօրեն՝ Սարեն Արգարյան
(ստորագրություն)	(ստորագրություն)

Հավելված 3
2024թ. հուլիսի 15-ին
կնքված N ԲՏԱՆ-ԴՄ-2024/01-10 պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

	Միջոցառման														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	Մրցույթի պլանով նախատեսված (CPV) կոդը	անվանումը	Կատարման դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2024թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	99999999	Դրամաշնորհային ծրագիր						3,750,000	3,750,000	3,750,000	3,750,000	3,750,000	3,750,000	3,750,000	**3,750,000**

Նախարարություն

ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն
ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3/3,
ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011039444
ՀՎՀՀ 02565518
Գլխավոր քարտուղար՝ Դավիթ Գասպարյան

(ստորագրություն)

Կազմակերպություն

«Ֆյուզ» ՍՊԸ
ք. Երևան Հակոբ Հակոբյան 3/2 փ. 0033
«Կոնվերս բանկ» ՓԲԸ

Հ/Հ 19300810038300
ՀՎՀՀ 06973725
Տնօրեն՝ Սարեն Աբգարյան

(ստորագրություն)

Հավելված 4
2024թ. հուլիսի 15-ին
կնքված N ԲՏԱՆ-ԴՄ-2024/01-10 պայմանագրի

Նախարարություն	**Կազմակերպություն**
ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3/3, ՖՆ գործառնական վարչություն Հ/Հ 900011039444 ՀՎՀՀ 02565518 Գլխավոր քարտուղար՝ Դավիթ Գասպարյան	«Ֆյուզ» ՍՊԸ ք. Երևան Հակոբ Հակոբյան 3/2 փ, 0033 «Կոնվերս բանկ» ՓԲԸ Հ/Հ 19300810038300 ՀՎՀՀ 06973725 Տնօրեն՝ Սարեն Աբգարյան
_____ (ստորագրություն)	_____ (ստորագրություն)

ԱԿՏ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանում՝ _____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝_____
Նախարարությունը և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ ներկայացված —— հաշվետվությունը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը իրականացրել է հետևյալ միջոցառումները՝

N	Իրականացված միջոցառման							
	անվանումը	գործառույթի համառոտ նկարագիրը	Արդյունքը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ պայմանագրի/
			ըստ պայմանագրի	Փաստացի	ըստ պայմանագրի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշվետվությունը հանդիսանում է սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում է:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____ ստորագրություն	_____ ստորագրություն
_____ ազգանուն, անուն	_____ ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 5
2024թ. հուլիսի 15-ին
կնքված N ԲՏԱՆ-ԴՄ-2024/01-10 պայմանագրի

ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ

Ծրագրի անվանումը՝ Ֆյուզ
Ծրագրի սկիզբ / ավարտ 01.06.2024 – 30.05.2025
Ծրագրի նկարագրություն

Ֆյուզը հեղափոխում է Web3 հավելվածների մշակման և թողարկման լանդշաֆտը՝ առաջարկելով բազմաֆունկցիոնալ, no-code հարթակ, որը նախատեսված է Web3 հավելվածների ստեղծումը դյուրին դարձնել բոլորի համար: Մեր հարթակը պարզեցնում է հավելվածների մշակման գործընթացը, այն մատչելի դարձնելով անհատների և ստարտափների համար, ովքեր չունեն բլոկչեյն ծրագրավորման փորձ կամ տեխնիկական հմտություններ ու գիտելիքներ:

Այսպիսով՝ ինչպես Wordpess ծրագիրը հնարավորություն է տալիս ստեղծել կայքեր վեբ2 ոլորտում, նմանատիպ տրամաբանությամբ Ֆյուզը հնարավորություն է տալիս ստեղծել ամբողջական հավելվածներ վեբ3 ոլորտում: Ֆյուզ հարթակը առաջարկում է մի քանի անկյունաքարային feature-ներ, որոնք նախատեսված են օգտատերերին վեբ3 հավելվածներ արագ և մատչելի կառուցելու հնարավորություն տալու համար՝

1. **Հավելվածների ստեղծման No-code հարթակ:** Ֆյուզը օգտատերերին հնարավորություն է տալիս ստեղծել ամենաառաջադեմ վեբ3/բլոկչեյն հավելվածները՝ առանց որևէ կոդ գրելու, drag-and-drop համակարգի շնորհիվ: Այս մոտեցումը մատչելի է դարձնում վեբ3/բոկչեյն հավելվածների մշակումը լայն լսարանի համար:
2. **Smart Contract գործարկում և ինտեգրացիա:** Smart Contract-ները ծառայում են որպես վեբ3/բլոկչեյն հավելվածների «backend» մաս, որը գտնվում է բլոկչեյնի վրա, ամբողջությամբ բաց է ցանկացած մարդու համար և հնարավորություն է տալիս ուսումնասիրել հավելվածի կոդը: Ֆյուզը տրամադրում է նախապես մշակված, աուդիտ անցած smart contract-ների գրադարան, որոնք օգտատերը կարող է ընտրել և գործարկել իր հավելվածի համար: Սա հնարավորություն կտա օգտատերերին մի քանի ռեպեների ընթացքում գործարկել և կրկնօրինակել շուկայում գործող անգամ ամենահայտնի և ամենաբարդ smart contract-ները որը հակառակ դեպքում օգտատիրոջից կպահանջեր մի քանի հոգուց կազմված բլոկչեյն ծրագրավորողների թիմ:
3. **Համայնքակենտրոնություն:** Ընդունելով համագործակցության ուժը՝ Ֆյուզը հնարավորություն է տալիս օգտատերերին օգտագործելու այլ օգտատերերի կողմից ստեղծված հավելվածների օրինակները կառուցելու իրենց սեփական հավելվածը: Սա հնարավորություն է տալիս կրկնօրինակել այլ օգտատերերի կողմից ստեղծված հավելվածները ռոպեների ընթացքում:
4. **Large Language model-ի ինտեգրացիա:** Օգտագործելով խոշոր լեզվային մոդելների (LLM) հնարավորությունները՝ Ֆյուզը հնարավորություն է տալիս օգտատերերին տեսնել թե այլ ընկերության կողմից ստեղծված հավելվածների յուրաքանչյոր ֆունկցի ինչպես է աշխատում, ինչ smart contract-ի հետ է հարաբերակցվում, որը հնարավորություն կտա օգտատերերին վստահել հավելվածը առավել:

Ֆյուզի տարբերակիչ մոտեցումը և համապարփակ գործիքակազմը լուծում են Վեբ3 տարածք մուտք գործելու հիմնական մարտահրավերները, ներառյալ բարձր ծախսերը, տեխնիկական բարդությունը և ծրագրավորման գիտելիքների անհրաժեշտությունը: Առաջարկելով հարթակ, որը միաժամանակ մատչելի և հզոր է՝ Ֆյուզը ոչ միայն դյուրացնում է վեբ3 հավելվածների ստեղծումը, այլև ակտիվորեն նպաստում է բլոկչեյնի տեխնոլոգիայի տարածումը: Ֆյուզը վեբ3/բլոկչեյն հավելվածների գործարկման շուկայում առաջին հարթակն է հանդիսանալու որը ցանկացած օգտատիրոջ հնարավորություն է տալիս ստեղծել վեբ3 հավելվածներ մի քանի րոպեից մինչև մի քանի ժամվա ընթացքում:

Նախարարություն

ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն
ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3/3,
ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011039444
ՀՎՀՀ 02565518
Գլխավոր քարտուղար՝ Դավիթ Գասպարյան

(ստորագրություն)

Կազմակերպություն

«Ֆյուզ» ՍՊԸ
ք. Երևան Հակոբ Հակոբյան 3/2 փ, 0033
«Կոնվերս բանկ» ՓԲԸ

Հ/Հ 19300810038300
ՀՎՀՀ 06973725
Տնօրեն՝ Սարեն Աբգարյան

(ստորագրություն)

ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ

ք. Երևան « » հուլիս, 2024թ.

ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղար Դ. Գասպարյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Նախարարություն», մի կողմից «Ֆյուզ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ կազմակերպություն), ի դեմս տնօրեն Սարեն Աբգարյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը, այսուհետ՝ Համաձայնագիր, հետևյալի մասին.

2024թվականի ապրիլի 14-ին հայտարարված ԲՏԱՆ-ԴՄ-2024/01 ծածկագրով մրցույթի հրավերին կից պայմանագրի 5-րդ կետը շարադրել հետևյալ բովանդակությամբ.

5. Վճարման կարգը և ժամկետները

5.1 Նախարարությունը սույն պայմանագրի 1.1 կետում նշված գումարի 75 տոկոսը՝ 3,750,000 (երեք միլիոն յոթ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամը, պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում, փոխանցում է կազմակերպության բանկային հաշվին:

5.2 Մնացած գումարը՝ պայմանագրի 1.1 կետում նշված գումարի 25 տոկոսը, 1,250,000 (մեկ միլիոն երկու հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամը, փոխանցվում է կազմակերպության հաշվին՝ սույն պայմանագրով սահմանված ամփոփիչ հաշվետվություններն ընդունելուց, նախարարության և կազմակերպության միջև պայմանագրի արդյունքն ընդունելու վերաբերյալ հանձնման-ընդունման ակտը ստորագրելուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում: Ծրագրի շրջանակում հաղթող ճանաչված կազմակերպությունը պարտավորվում է ծրագիրն ավարտել մինչև ոչ ուշ, քան 2025 թվականի դեկտեմբերի 25-ը:

Նախարարություն	**Կազմակերպություն**
ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3/3, ՖՆ գործառնական վարչություն Հ/Հ 900011039444 ՀՎՀՀ 02565518 Գլխավոր քարտուղար՝ Դավիթ Գասպարյան (ստորագրություն)	«Ֆյուզ» ՍՊԸ ք. Երևան Հակոբ Հակոբյան 3/2 փ, 0033 «Կոնվերս բանկ» ՓԲԸ Հ/Հ 19300810038300 ՀՎՀՀ 06973725 Տնօրեն՝ Սարեն Աբգարյան A. Saren (ստորագրություն)